Արձանագրություն N 2

ԳՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-2023/4 ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնումներ կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Սևան *10.11.2023թ, ժ 11:00, ք. Սևան, Նաիրյան, 164*

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Ղուկասյան – Սևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար

Հանձնաժողովի անդամներ՝ Մ.Մկրտչյան – Սևանի քաղաքապետարանի աշխատակազմի հողաշինության և քաղաքաշինության բաժնի պետ

Մար. Մկրտչյան – Սևանի քաղաքապետարանի աշխատակազմի մասնագետ

Է. Ղազարյան – Սևանի քաղաքապետարանի ֆինանսատնտեսագիտական բաժնի աշխատանքների համակարգող

Մ. Ավետիսյան – Սևանի քաղաքապետարանի աշխատակազմի մասնագետ

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ավետիսյան – Սևանի քաղաքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ

ԳՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-2023/4 ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնումներ կատարելու ընթացակարգով հայտերի բացման, դրանցում առկա փաստաթղթերի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության գնահատման և ընտրված մասնակիցի որոշման մասին

---

1. *Ընդունել ի գիտություն, որ՝*

1.1 Գնման ընթացակարգի մասին հայտարարությանը և հրավերը 03.11.2023 թ հրավերը տեղադրվել է www.armeps.am էլեկտրոնային գնումների կայքում և հրապարակվել է www.gnumner.am կայքում: Նիստը սկսվեց 10.11.2023թ. ժամը 11:00-ին, իսկ մեկ աշխատանքային օրով կասեցումից հետո շարունակվեց 14.11.2023թ. ժամը 11:00-ին:

1.2 Սևանի համայնքապետարանի կարիքների համար Սևան համայնքի Սեմյոնովկա բնակավայրի ակումբի շենքի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման ԳՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-2023/4 ծածկագրով գնման ընթացակարգի հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N	Մասնակցի անվանումը	Հասցեն, հեռ.
1	«ԼԻԴԵՐ. ԳՐՈՒՊ» ՍՊԸ	Ք.Սևան, Նաիրյան, 176/1, հեռ. 055788835
2	«Բարեշեն Տանիք» ՍՊԸ	Սևան համայնք, Ծովագյուղ բնակավայր, 1 թաղամաս, 2/10, հեռ. 077181831
3	«Ավագ Շին 1» ՍՊԸ	Ք. Հրազդան, Քաղսի, 4 թաղամաս, 88 հեռ. 041210020
4	«Արմ Մեգա Գրուպ» ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ,գ.Երանոս 7-րդ փողոց, տուն 6, Հեռ. 098300313
5	Գևորգ Ադլոյան Ա/Ձ	-

2. *Տվյալներ հայտերը կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.*

- Գնման ընթացակարգի մասնակիցները հայտերը կազմել և ներկայացրել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

3. *Տվյալներ հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.*

- հայտ ներկայացրած մասնակիցները ներկայացրել են գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իրենց տվյալների համապատասխանության մասին, իրական շահառուների մասին տվյալներ, աշխատանքների կատարման ծավալաթերթ-նախահաշիվ, գնի առաջարկ: «ԼԻԴԵՐ. ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի և «Արմ Մեգա Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում հրավերի պահանջներին անհամապատասխանությունների («Արմ Մեգա Գրուպ» ՍՊԸ ներկայացրած հայտում ներառված չէր աշխատանքների կատարման ծավալաթերթ-նախահաշիվը, իսկ «ԼԻԴԵՐ. ԳՐՈՒՊ» ՍՊԸ ներկայացրած հայտում սխալ էր նշված իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը) ուղղման համար նիստը 1 աշխատանքային օրով կասեցվեց և շարունակվեց նոյեմբերի 14-ին ժամը 11:00-ին: Գևորգ Ադլոյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում էին հայտին կցվող բոլոր փաստաթղթերը, այդ թվում գնային առաջարկը: Բացված հայտերում հրավերով պահանջվող մյուս բոլոր փաստաթղթերը առկա են:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. Տվյալներ մասնակիցների կողմից ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

- ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով սահմանված և ծանուցման մեջ նշված ժամանակաընթացքում հայտում տեղ գտած անհամապատասխանությունները ուղղվեցին: Մասնակիցների կողմից ներկայացված բոլոր փաստաթղթերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

- գնահատող հանձնաժողովի կողմից Գևորգ Ադլոյան Ա/Ձ-ի **կողմից ներկայացված հայտը** էլեկտրոնային եղանակով գնահատվեց անբավարար և մերժվեց:

- գնահատող հանձնաժողովի կողմից մյուս մասնակիցների ներկայացրած հայտերը էլեկտրոնային եղանակով գնահատվեցին բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

5. Մասնակիցների առաջարկած գները՝

ՀՀ դրամ

Սևան համայնքի Սեմյոնովկա բնակավայրի ակումբի շենքի վերանորոգման աշխատանքներ				
Հ/Հ	Ապրանքի անվանումը	Արժեքը	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	«ԼԻԴԵՐ. ԳՐՈՒՊ» ՍՊԸ	2446654	489331	2935985
2	«Բարեշեն Տանիք» ՍՊԸ	2784525	556905	3341430
3	«Ավագ Շին 1» ՍՊԸ	2577925	515585	3093510
4	«Արմ Մեգա Գրուպ» ՍՊԸ	2600000	520000	3120000

թվաբանական սխալներ չկան

6. Մասնակցի կողմից ներկայացրած հայտում տեղ գտած անհամապատասխանությունների պատճառով Գևորգ Ադլոյան Ա/Ձ հայտը գնահատել անբավարար և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետով սահմանված կարգով մերժել:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7. Գնային առաջարկների գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց գնման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել բավարար գնահատված հայտերից ամենացածր գնային առաջարկ ներկայացրած մասնակից **«ԼԻԴԵՐ. ԳՐՈՒՊ» ՍՊԸ**-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

8. Հանձնաժողովի հաջորդ՝ հայտերի գնահատման, նիստը հրավիրել պայմանագիրը կնքելուն հաջորդող աշխատանքային օրը ժամը 11:00, Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Նաիրյան 164, 18 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Ա.Ղուկասյան

Անդամներ՝ _____ Մ. Մկրտչյան

_____ Մ. Ավետիսյան

_____ Մար. Մկրտչյան

_____ Է. Ղազարյան

Քարտուղար՝ _____ Ա. Ավետիսյան